

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ 2»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԵՐ-1 ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ
ԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Վ. Խաչատրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	7
2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ	12
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	12
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
4.1. Նախատեսվող գործունեության վայրը	12
4.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	15
4.3. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն	29
4.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ	31
4.5. Կլիմայական պայմաններ	31
4.6. Մթնոլորտային օդ	38
4.7. Զրային ռեսուրսներ	41
4.8. Հողային ծածկույթ	45
4.9. Կենսաբազմազանություն	46
4.10. Անտառային ռեսուրսներ	59
4.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	59
4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ	62
4.13. Ազդակիր համայնքը	63
4.14. Այլընտրանքային տարբերակներ	66
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	68
6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ	74
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ	76
8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	83
9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	85
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	87
11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	89
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	91
Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների պատճենները	92

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն: Նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով կամ այլ իրավական ակտերով փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ նախատեսված չլինելու դեպքում՝ նախատեսվող գործունեության փուլային նկարագիր, ընդերքօգտագործման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 36-րդ և 39-րդ հոդվածներով սահմանված ծրագիր կամ 50-րդ հոդվածով սահմանված արդյունահանման նախագիծ.

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և

մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

Նախատեսվող գործունեություն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

Նախաձեռնող՝ հիմնադրությային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

Ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր (Երևան քաղաքի դեպքում՝ վարչական շրջան).

Ազդակիր համայնք՝ ազդակիր բնակավայր ներառող համայնք.

Շահագրգիռ անձ կամ հանրություն՝ հիմնադրությային գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր՝ հիմնադրույթային փաստաթղթի դրույթների գործողության կամ նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթին համապատասխան իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն.

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված

հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդ. 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.23 ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
- «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի թիվ ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի թիվ 1325-Ն որոշում, որով սահմանվել է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի №1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները;
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. N 369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:
- ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N 1848-Ն որոշում, որով հաստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N 1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը (համաձայն N 1 հավելվածի) և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ (համաձայն N 2 հավելվածի):

2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ

Գործունեության նախաձեռնողը «Մազնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունն է: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերության գրանցման համարն է 273.120.1109092, գրանցման ամսաթիվը՝ 10.01.2020թ., գրանցման հասցեն՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՄԱՇՏՈՑԻ Պ., 54, 0010:

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Մազնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրություն, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


4.1. Նախատեսվող գործունեության վայրը

Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Արարատ խոշորացված համայնքի Արարատ գյուղական բնակավայրի սահմաններում (նկար 1-3):


Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

Նոյակերտ, Արարատ և Սուրենավան գյուղերի բնակելի հատվածներից Զովեր-1 երևակման տարածքը գտնվում է համապատասխանաբար 4.9կմ, 4.4կմ և 6.1կմ հեռավորությունների վրա: Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհը գտնվում է երևակման տարածքից 6.04կմ, Հ-11 հանրապետական նշանակության ավտոճանապարհը՝ 5.02կմ հեռավորությունների վրա:

Երևակման տարածքից մոտ 2.4կմ հյուսիս-արևելք գտնվում է Արարատի ոսկու կորզման գործարանի պոչամբարը, իսկ մոտ 1.48կմ հեռավորության վրա՝ արհեստական լճակներ (ձկնաբուծարաններ):



Նկար 1.



Նկար 2.

Հայցվող տարածքի կոորդինատները ըստ ArmWGS-84 համակարգի ներկայացված են ստորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Կետի համարը	Կոորդինատները	
	X	Y
1.	4405284.8833	8473471.3014
2.	4405270.6650	8473543.6531
3.	4405186.5643	8473535.7622
4.	4405116.8207	8473523.9622
5.	4405008.6780	8473516.0700
6.	4404900.2536	8473520.0155
7.	4404803.0371	8473520.1329
8.	4404732.0687	8473532.9811
9.	4404695.9084	8473541.1542
10.	4404721.1422	8474493.7301

Կետի համարը	Կոորդինատները	
	X	Y
11.	4404595.1285	8474486.9039
12.	4404429.4424	8473797.8126
13.	4404458.9748	8473585.2877
14.	4404478.4104	8473442.2638
15.	4404491.1646	8473431.6990
16.	4404720.3039	8473316.6352
17.	4405010.4944	8473373.9901
18.	4405284.8833	8473471.3014
1.	4405284.8833	8473471.3014

Երևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

հյուսիսային լակնության $39^{\circ}46'15.28''$

արևելյան երկայնության $44^{\circ}41'29.07''$:

4.2 Նախատեսվող գործունեության բնութագիր

Երևակման տարածքը հարում է Արաքս գետի ձախափնյա ողողահունի 803-805մ բացարձակ բարձրություններին:

Ջովեր-1 ավազակոպճային խառնուրդի երևակման շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ. Ն. Պաֆենհոլցը, Ս. Ս. Մկրտչյանը, Ա. Տ. Ասլանյանը, Հ. Հ. Գաբրիելյանը, Ռ. Ա. Առաքելյանը, Ա. Տ. Վեհունին, Ա. Ս. Գրիգորյանը և ուրիշներ:

Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ստորին պալեոգոյի մետամորֆային, պալեոգոյի-մեզոգոյի և պալեոգենի հրաբխածին-նստվածքային, չորրորդականի նստվածքային, ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ-էյուվիալ առաջացումները:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերն արտացոլված են Է. Խարազյանի և Հ. Չուբարյանի կողմից կազմված 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզում (նկար 4): Շերտագրական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից վերև).

Պ ա լ է ն գ ո յ

Միջին դևոն: Շերտագրական կտրվածքի (մերկացված մասի) ամենահին ապարները ներկայացված են այս հասակի ավազաքարերի, կավային թերթաքարերի և ալևրոլիտների հետ հերթափոխվող մուգ մոխրագույն կրաքարերով:

Վերին դևոն: Ներկայացված է օրգանական ծագման բեկորային ավազաքարային կրաքարերով, քվարցիտներով և թերթաքարերով:

Ստորին կարբոն: Ներկայացված է վիզյան-տուրնեյան հարկերի կրաքարերով, քվարցիտներով, թերթաքարերով և ավազաքարերով: Կարբոնի հասակի ապարների ընդհանուր հզորությունը 200մ է:

Պերմի ժամանակաշրջան: Ներկայացված է ստորին և վերին բաժինների օրգանածին, բիտումակիր կրաքարերի նրբաշերտերով և կավային թերթաքարերով:

Մ ե գ ո գ ո յ

Տարածաշրջանում լայն տարածում ունեն այս դարաշրջանի հրաբխածին-նստվածքային առաջացումները, որոնք ներկայացված են վերին կավձի տարբեր հարկերի հրաբխածին-նստվածքային ու նստվածքային առաջացումներով, որոնց ընդհանուր հզորությունը մոտ 850մ է: Վերին կավձի առաջացումներն հորատանցքերով հատվել են տարբեր խորությունների վրա, անկյունային և շերտագրական աններդաշնակությամբ տեղադրված են պալեոգոյի ապարների վրա:

Ստորին տուրոն: Ներկայացված է օրգանածին բեկորային և կավային կրաքարերի ենթաշերտերով, մերգելներով, կոնգլոմերատներով, ավազաքարերով, տուֆափշրաքարերով և տուֆաավազաքարերով:

Ստորին կոնյակի հրաբխածին-նստվածքային հաստվածքում մասնակցում են անդեզիտաբազալտները, կրաքարերն ու կավերը:

Պ ա լ է ն գ է ն


Այս հասակի ապարները տարածաշրջանում ներկայացված են ստորին և միջին էոցենի, վերին օլիգոցեն-ստորին միոցենի առաջացումներով, որոնք աննշան անկյունային աններդաշնակությամբ ծածկում են վերին կավձի նստվածքներին: Ստորին էոցենի հաստվածքը կազմված է նումուլիտային կրաքարերով, կրային ավազաքարերով և կավերով, միջին էոցենը՝ անդեզիտներով, անդեզիտաբազալտներով, դրանց պիրոկլաստներով և տուֆափշրաքարերով:

Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Փ Ա Ր Տ Ե Չ

(նախկին J-38-6-A, J-38-6-B բարձրից)

Մասշտաբ 1:50000

Կտրվածքների համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՇԱՆՆԵՐ

- Q_{IV}** Շահանավանյան հեղեղային, ցամաքային, բազալիտային հատվածներ, գլաբարներ, ալվաներ, կավահորեր
- Q_{III}** Վերին կարթագյալան-ժամանակակից առաջացումներ՝ գլաբարներ, ալվաներ, կավահորեր, ժայռաքերտադարձային և խճային առաջացումներ
- tr Q_{II}** Ատորին չորտրոպականի տարածքային աղբյուրների հատվածներ, կրային տափեր
- ժ² N¹** Պալեոզենի համակարգի վերին օլիգոցենի-ատորին միացնող բաժնիկատարներ, կարթագյալան կավեր, ալվանաբարներ, աղբյուրներ, կոնգլոմերատներ
- ժ²** Պալեոզենի համակարգի միջին էոգենի առվակներ, անոթախառնադարձներ, քրտնոց պիրոկլաստներ, տափաքերտիկներ
- ժ¹** Պալեոզենի համակարգի ստորին էոգենի նումուլիտային կրաքարեր, կրային ալվանաբարներ, կավեր
- K₃ k₁** Վերին կավոճի համակարգի ստորին կոնյակի բաժնիկատարներ, կրաքարեր, կավեր
- K₂ t** Վերին կավոճի համակարգի ստորին ստորին բաժնիկատարներին բնորոշ կրաքարեր, մեղմ կավեր և կավային կրաքարերի էնթալ-բուլոլ, կոնգլոմերատներ, ալվանաբարներ, տափաքերտիկներ, տափալվանաբարներ
- P₂** Վերին աերսի կրաքարեր, օրգանածին կրաքարեր, բխտանավիր կրաքարեր
- P₁** Ատորին աերսի կրաքարեր, օրգանածին կրաքարեր, կրաքարեր, կավային քերթաքարեր
- C₁ t-v** Ատորին կարթոյի համակարգի տարրեր՝ վազելի բաժնիկաբլոկներ, կրաքարերի խրտաշերտերով
- D₃** Վերին լիտի բաժնի օրգանական ծագման բնորոշ ալվանաբարային կրաքարեր, բլրացվածներ, ալվանավանդի քերթաքարեր
- D₂** Միջին դառնի բաժնի ալվանաբարներ, սև կավային քերթաքարերի և աղբյուրների հետ ինքնախմբվող մուգ մոխրագույն կրաքարեր

Ջովեր-1 ԱՄՆ երևական հայցվող տարածք

Կտրվածք Ա - Բ գծով



Նկար 4.

Վերին օլիգոցեն-ստորին միոցենի հասակին է վերագրվում խայտաբղետ կավերի (առավելապես՝ կարմրագույն և հաճախ՝ գիպսաբեր), նուսուլիտային ավազաքարերի, կոնգլոմերատների, այրվող թերթաքարերի հերթափոխվող շերտախմբը: Պալեոգենի հասակի առաջացումների ընդհանուր հզորությունը տատանվում է 750-1000մ-ի սահմաններում:

Չորրորդ և Ժամանակաշրջան

Նկարագրվող շրջանում տարածված են ստորին չորրորդականին վերագրվող տաք հանքային աղբյուրների նստվածքները՝ տրավերտինները, կրային տուֆերը և վերին չորրորդական-ժամանակակից գլաքարերը, ավազները, կավահողերը, ժայռաբեկորազլաքարային և խճային առաջացումները, որոնք կուտակվել են Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով ձևավորված լճային ավազաններում:

Մեծ տարածում ունեն նաև ժամանակակից ալյուվիալ, պրոլյուվիալ և դելյուվիալ առաջացումները: Արաքս գետի հովտի ալյուվիալ-պրոլյուվիալ փուխր առաջացումները ներկայացված են են տարատեսակ ավազակոպճային և ավազային նստվածքներով, որոնց հզորությունը հասնում է մինչև 20մ-ի, ինչը վկայում է դրա ինտենսիվ ակումուլյատիվ-էրոզիոն գործունեության մասին:


Տեկտոնական տեսանկյունից երևակման շրջանը մտնում է Ա. Ասլանյանի կողմից առանձնացված Արարատյան լեռնատեկտոնական գոտու մեջ, որը ընդգրկում է Փոքր Կովկասի ներքին աղեղը՝ Արաքսի միջին ավազանի սահմաններում: Այս գոտու կազմում առանձնացվում են երկու տեկտոնական գոտիներ՝ Երևանյան և Մերձարաքսյան մեգասինկլինալները:

Նախնական դիտարկման արդյունքներով և ֆոնդային նյութերի ուսումնասիրության տվյալներով, Զովեր-1 երևակման տարածքը կապված է Արաքս գետի արտաբերման և ավամերձ ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ նստվածքների հետ (նկար 5): Երևակման երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ժամանակակից ալյուվիալ առաջացումները՝ ավազակոպճային կուտակի տեսքով, որի հիմքում տեղադրված են վերին չորրորդականի նստվածքային առաջացումները՝ ներկայացված ավազակավերով:

22. ԱՐԱՐԱՏԻՆ ՄԱՐԳԻ ԶՈՎԵՐ-1 ԱՎԱՅԱԿՊԱՃԱՅԻՆ ԽԱՆՈՒՐԻ ԵՐԵՎԱԿԱՆԱՆ
ՄԻՆԵՐԱՏԻԿ ԵՐԿՐԱԲԱՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ

Մասշտաբ 1 : 5000

Նախնական փուլի համալրումը՝ ՊՇՏ-84 (ԱՐԱՅԵՔ 02)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


- ՊՇՏ-84 Ժամանակակից արտադրվող զինվորական առաջադրանքներ՝
հայտնաբերված գտնված
- ՊՇՏ-84 Ժամանակակից արտադրվող առաջադրանքներ՝
հայտնաբերված (կարված)
- ՊՇՏ-84 Ժամանակակից զինվորական առաջադրանքներ՝
կարված (կարված)

- ՊՇՏ-84 Ժամանակակից զինվորական առաջադրանքներ՝
կարված (կարված)
- ՊՇՏ-84 Ժամանակակից զինվորական առաջադրանքներ՝
կարված (կարված)


Չափեր 1 և 2-ի կազմակերպության հայտնաբերված առաջադրանքներ

Մասշտաբ՝ երկ. 1 : 1000
տեղ. 1 : 100


ԿՏԲ-ՎԱՍՏՔ 1-1՝ ԳՇՈՎ



ԿՏԲ-ՎԱՍՏՔ 2-2՝ ԳՇՈՎ



ԿՏԲ-ՎԱՍՏՔ 3-3՝ ԳՇՈՎ



Նկար 5.

Երևակումը վերագրվում է գետաողողատային տիպին, սակայն քանի որ տարածքը Արաքս գետից առանձնացված է վարարումներից պաշտպանող արգելաթմբով՝ պաշարները ուսումնասիրվելու են և գնահատվելու են միայն ատատիկ վիճակում:

Երևակման մակերևութային մասը ներկայացված է ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով՝ հողանման աղակալված զանգվածով, որի հզորությունը մոտ 0.5մ է:

Օգտակար հաստվածքը ներկայացված է ավազակոպճային նյութի և ավազների ժամանակակից հունային նստվածքներով, որոնց հզորությունը հասնում է 6.0-7.5մ-ի:

Ավազակոպճային խառնուրդի կուտակը թույլ ցեմենտացած է ավազակավային նյութով: Նախնական դիտարկումներով ավազի միջին պարունակությունը օգտակար հաստվածքում կազմում է մոտ 60%, կոպճինը՝ մոտ 40 %:

Ըստ միներալային կազմի ավազները պատկանում են տարակազմ (պոլիմիկտ) ավազների խմբին՝ կազմված ամֆիբոլներից, պիրոկսեններից, դաշտային սպաթներից, քրոմիտից, մագնետիտից, մասամբ՝ քվարցից, փայլարներից, լիմոնիտից, լեյկոքսենից և իլմենիտից:

Հատիկները ըստ ձևի հիմնականում լավ հղկված, մշակված կլորավուն բեկորներ են իսկ որոշ մասը անկյունավոր են անհարթ մակերևութով:

Ավազները ըստ գույնի պատկանում են մոխրավունից մինչև մուգ գույնի ավազներին:


Գլաքարային զանգվածը բնութագրվում է միջինից-լավ հղկվածությամբ, դիտարկվել են բազալտային կազմի արտավիժված ապարների և ինտրուզիվ ծագման ապարների գլաքարեր:

Ըստ ֆոնդային տվյալների վերլուծության, օգտակար հաստվածքը հիմնատակվում է ժամանակակից-վերին չորրորդական ժամանակաշրջանի կավերով:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 3-ի հրահանգի աղյուսակ 1-ի՝ երևակմումը պատկանում է 2-1 խմբին՝ 2.1. բոլոր ծագումնաբանական տիպերի խոշոր և միջին շերտային ու շերտաձև հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով (ոչ կոնդիցիոն ապարների նրբաշերտերով) և հզորությամբ կամ ավազի

ու կոպճի փոփոխական որակով (տարբեր տեսակներն ու մակնիշները տարածականորեն չեն երկրաչափացվում):

Հայցվող տեղամասից մոտ 0.7կմ հյուսիս-հյուսիս-արևելք գտնվում է Վանինայի ավազի հանքավայրը, մոտ 1.9կմ արևմուտք՝ Նոյակերտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ՕՀՊԳ-ի 2008 թվականի դեկտեմբերի 19-ի №197 որոշմամբ հաստատվել են «Վանինա» ավազի հանքավայրի պաշարները (շահագործվում է «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից, ՇԱԹՎ-29/251), իսկ 2022 թվականին՝ Նոյակերտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի պաշարները (նկար 6):



Նկար 6.

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Զովեր-1 երևակման տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» և «Ավազի և ավազակոպճային խառնուրդի

հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման» հրահանգների հանձնարարականների:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Համաձայն «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգ»-ի՝ ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, Զովեր-1 տեղամասի ավազակոպճային խառնուրդի կուտակը համապատասխանում է 2-1 խմբին:

Ընդ որում հաշվի առնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 8.5մ խորությամբ (որից 7.5մ՝ օգտակար հաստվածքում) թվով 24 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 2.0մx2.0մ:

Տեղամասի հետախուզումը նախատեսվում է կատարել միմյանցից 150-300մ հեռավորությամբ հետախուզական պրոֆիլներով, որոնց վրա հետախուզական հորերի հեռավորությունը կազմում է 75-250մ: Ինչպես արդեն նշվել է, ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական B և C₁ կարգերով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 8736-2014 և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ տեխնիկական պահանջների:

Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում.

կազմակերպում և լուծարում

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Նախագծի կազմում.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

Երկրաբանահանությային աշխատանքներ

Հայցվող տարածքի կոորդինատները որոշվել են տեղանքում սերտիֆիկացված GPS սարքի կիրառմամբ ըստ WGS-84 ARMREF 02 համակարգի:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է մոտ 32.3հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանությային աշխատանքներ: Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 15.2կմ:

Հետախուզական փորվածքների անցում

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում:

Նախատեսվում է 24 հետախուզահորերի անցում, որոնց առավելագույն խորությունը նախատեսվում է 8.5մ, կտրվածքը՝ 4մ², ընդհանուր 204գծ.մ ծավալով:

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանալու է 816մ³ զանգված, որից մոտ 48մ³ հողաբուսական զանգված, 720մ³ ավազակոպճային խառնուրդ և 48մ³՝ օգտակար հաստվածքը հիմնատակող կավային առաջացումներ:

Հետախուզական փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 204գծ.մ:

Ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում երկու կետում որոշել բնամասում ավազակոպճային խառնուրդի բնական խտությունը, ծավալալիրքային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Նմուշարկում

Տեղամասի ավազակոպճային խառնուրդի կուտակը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական ավազի և խճի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 40x40սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով: Ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից, մեծ կտրվածքով մեծազանգված նմուշները ապահովում են կուտակի հատիկաչափական կազմի բարձր հավաստիության տվյալների ստացումը: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ օգտակար կուտակի ամբողջ հզորությամբ:

Ակոսների երկարությունը կարող է նախատեսվում է օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ, որը ըստ ֆոնդային տվյալների վերլուծության կազմում է մինչև 6.0-7.5մ (հետագա հաշվարկներում ընդունվելու է 7.5մ առավելագույն խորությունը):

Հաշվի առնելով օգտակար հաստվածքի պարզ, գործնականում համասեռ ներքին կառուցվածքը, օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի ոչ մեծ փոփոխականությունը և կուտակի հզորությունը, յուրաքանչյուր հետախուզական փորվածքում նմուշարկումը նախատեսվում է իրականացնել կուտակի լրիվ հզորությամբ:

մեկ միասնական նմուշով: Անհրաժեշտության դեպքում կկիրառվի հատվածամասերով (սեկցիաներով) նմուշարման եղանակը:

Նմուշների մշակումը նախատեսվում է կատարել հետևյալ կերպ. նմուշարկման ակոսից վերցված ամբողջ նյութը լցվելու է բրեզենտե փովածքի վրա, խառնվելու է և կրճատման եղանակով հասցվելու է 15կգ-ի, որն էլ կազմվելու է շարքային նմուշի նյութը: Այն լցվելու է առանձին պարկերի մեջ, պիտակավորվելու է և ուղարկվելու է լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Նախատեսվում է վերցնել 24 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար (մոտ 600կգ), 3 նմուշ քիմիական անալիզների (մոտ 3կգ) և 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար (մոտ 15կգ): Լաբորատոր փորձարկումների համար վերցվող ավազակոպձային խառնուրդի կշիռը կկազմի մոտ 618կգ: Նմուշարկման ակոսներից վերցված նյութից կազմվելու է նաև 2 տեխնոլոգիական նմուշ, որի հիման վրա կուսումնասիրվեն օգտակար կուտակից տարանջատված կոպձի և դրա ջարդման արդյունքում ստացված խճի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքներ

Բոլոր հետախուզական փորվածքները և երկրաբանական սահմանները տեղադրվելու/նշվելու են գործիքային կապակցմամբ: Կիրառվելու է Garmin ETREX 22X դյուրակիր նավիգացիոն սարքը:

Ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական

և ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել տարածքի հեռանկարային շահագործման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, ավազակոպձային խառնուրդի կուտակի ռադիոմետրիական հատկությունների պարզաբանում, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

Հետախուզական փորվածքների հետլցնում

Հետախուզական փորվածքների անցման ժամանակ օգտակար հաստվածքը ծածկող մինչև 0.5մ հզորությամբ հողային զանգվածը նախապես հեռացվելու է և կուտակվելու է հորի մոտակայքում: Նմուշարկման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հիմնատակող կավային ապարների, հետախուզահորերից հանված ծավալով ավազակոպճային խառնուրդի կուտակի հետլցնում, որի վրա փովելու է մոտ 48մ³-ը հողաբուսական շերտը: Կավային ապարների և ավազակոպճային խառնուրդի հետլցման աշխատանքները կկատարվեն մեխանիզացված եղանակով՝ էքսկավատորով, իսկ հողային զանգվածի հետփռումը՝ ձեռքով:

Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ

Ձովեր-1 երևակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման դիտարկմանը:

Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը կկատարվի գոյություն ունեցող ասֆալտապատ և հողածածկ միջհամայնքային, դաշտամիջյան ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Աշխատանքները սպասարկելու է ընկերության բեռնատար մեքենան:

Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

Անձնակազմի տեղափոխումը կատարվելու է մարդատար մեքենայով:

Աշխատանքների անվտանգության տեխնիկան

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օդային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում

են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ: Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու ջրցուղարանը:

4.3 Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն

Երկրաձևաբանական տեսակետից Ջովեր-1 երևակման տարածքը հարում է Արարատյան գոգավորության մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:


Երևակման տարածքը հարում է Արաքս գետի ձախափնյա ողողահունի 803-805մ բացարձակ բարձրություններին: Արարատյան դաշտը ձգված է արևելյան և հարավ-արևելյան ուղղությամբ, Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունքը, որով Արարատյան դաշտը միանում է Նախիջևանի սահմանին: Արարատյան դաշտն ունի 100կմ երկարություն, լայնությունը հյուսիս-արևմտյան մասում հասնում է 15-17կմ, հարավ-արևելյան մասում 4-5կմ:

Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով: Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ:


Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգավորություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել են Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները: Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է ժամանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովիտաբան կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների:

Մակերևույթն ընդհանրապես տափարակ է, աջից ու ձախից փոքր թեքությամբ դեպի Արաքս գետը: Վերջինիս հոսքի ուղղությամբ այն հավասարաչափ իջնում է կիլոմետրում 1.75մ: Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից 800-1000մ է, ընդգրկելով նաև շրջակա նախալեռները, մինչև դրանց կտրուկ վերելքը դեպի լեռները: Արարատյան դաշտը մակերեսից ծածկված է նորագույն ալյուվիալ բերվածքներով, որոնք Արաքսի հունից դեպի նախալեռներ կրում են զգալի փոփոխություններ:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 7-8-ում:




Նկար 7.



Նկար 8.

4.4 Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ,

Երևական շրջանում արտածին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով: Մոտակա հայտնի սողանքային մարմինները քարտեզագրվել են հայցվող տարածքից 7.4-8.4կմ հեռավորության վրա՝ Սուրենավան գյուղից հյուսիս (նկար 9):




Նկար 9.


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի: Համաձայն դրա՝ Ջովեր-1 երևական տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.3g կամ 300սմ/վրկ² (նկար 10):

4.5 Կլիմայական պայմաններ

Երևական շրջանը, իր ցածր հիպսոմետրական դիրքի շնորհիվ, բնութագրվում է արևային ճառագայթման զգալի ինտենսիվությամբ (նկար 11): Կլիման բնութագրվում է որպես տաք: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի 16-ին և ավարտվում փետրվարի 13-ին, տևողությունը 60 օր: Երևական շրջանի կլիմայական բնութագրերը ներկայացված են ստորև աղյուսակներում, ըստ Արարատ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալների:



Նկար 10.



Նկար 11.

Օդի միջին ջերմաստիճանը

Ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմել է -31.6°C , բացարձակ առավելագույնը՝ 42.6°C :

Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

մ.ա./մ.ն.	ըստ ամիսների, °C												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
մ.ա.	2.1	6.0	13.5	20.1	25.1	30.2	33.7	33.5	29.0	21.8	13.3	5.1	19.5
մ.ն.	-7.0	-4.5	1.2	7.2	11.7	15.9	19.5	18.8	13.7	7.2	0.9	-3.9	6.7

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
ա	18.9	21.0	27.8	34.5	35.3	39.5	42.6	42.2	39.3	32.2	26.4	21.9	42.6
ն	-29.7	-29.2	-23.0	-6.2	1.5	5.5	8.7	7.3	1.6	-4.7	-12.5	-31.6	-31.6

Նշված սահմաններում օդի միջին օրական ջերմաստիճանով օրերի քանակը

Ջերմաստիճանային միջակայք, T, °C				Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
-24.9	-ից	մինչև	-20.0	0.1											0.05
-19.9	-ից	մինչև	-15.0	0.9	0.2										0.1
-14.9	-ից	մինչև	-10.0	2.5	0.7	0.1									0.7
-9.9	-ից	մինչև	-5.0	5.6	2.7	0.2									2.5
-4.9	-ից	մինչև	0.0	12.9	9.0	1.5	0.02							1.7	10.9
0.1	-ից	մինչև	5.0	7.5	10.8	7.6	0.4						0.3	9.1	13.0
5.1	-ից	մինչև	10.0	1.2	4.6	14.6	4.5	0.1				0.03	3.8	14.4	3.1
10.1	-ից	մինչև	15.0	0.2	0.3	6.6	15.6	4.7	0.3			0.8	15.8	4.3	0.2
15.1	-ից	մինչև	20.0			0.5	8.8	17.9	5.7	0.4	0.5	10.2	10.6	0.2	0.02
20.1	-ից	մինչև	25.0				0.7	8.1	17.0	7.8	9.6	16.2	0.5		
25.1	-ից	մինչև	30.0				0.03	0.2	7.0	20.4	19.7	2.8			
30.1	-ից	մինչև	35.0						0.1	2.3	1.2				

Աղյուսակ 6.

Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
Դեկտեմբեր	0.8	12	0.2	7	0.1	5	0.03	2		
Հունվար	3.5	25	1.4	18	0.1	3				
Փետրվար	1.5	16	0.7	10	0.03	2				

Աղյուսակ 7.

Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
Հունիս	27.7	30	16.8	30	2.7	11		
Հուլիս	30.8	31	28.0	31	11.4	26	0.4	5
Օգոստոս	30.8	31	27.7	31	10.1	28	0.4	6

Աղյուսակ 8.

Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)

ա.մ./ ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
ա.մ.	9.2	13.4	21.1	26.9	31.3	35.4	38.5	38.1	34.8	28.1	20.0	12.7	39.2
ն.մ.	-14.9	-12.1	-5.7	0.4	6.2	10.8	14.4	13.8	7.1	0.5	-5.9	-10.9	-17.0

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

Ըստ ամիսների												Միջին տարեկան
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
78	71	60	57	55	49	45	46	50	62	72	78	60
Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %						Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %						
Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին				Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին				
78		63				45		32				

Մթնոլորտային տեղումները

Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն												
Ըստ ամիսների												Տարեկան
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
17	18	24	36	36	21	10	7	8	18	21	17	233
26	34	26	31	34	37	20	31	28	32	35	28	37

Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին կազմում է 97մմ, ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 136մմ:

Չյան ծածկույթը

Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
35	28	61	37

Քամիները

Ամիսներ	Կրկնելիությունը, %							
	Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների			
	Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան
հունվար	16	3	8	18	10	5	11	29
	1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2
ապրիլ	13	4	8	29	15	5	8	18
	2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8
հուլիս	18	3	6	14	12	5	10	32
	2.6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0
հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26
	2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5

Ամիսներ	Անոթորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
հունվար	50	1.3	Հս	2.6	ՀվԱրլ	2.7
ապրիլ	28	2.3				
հուլիս	23	2.3				
հոկտեմբեր	39	1.5				

Քամու հաշվարկային արագությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			25	50	100
921.5	1.7	14	25	26	28

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Ամսական միջին արժեքները, օր												Տարեկան
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
0.4	0.8	1.6	2.1	2.1	2.3	1.5	1.4	0.8	0.6	0.3	0.5	14

Ջեռուցման ժամանակահատվածի սկիզբը, վերջը և տևողությունը

Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1 նոյեմբեր	30 մարտ	150

4.6 Մթնոլորտային օդ



Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման մոտակա կայանը գտնվում է Արարատ քաղաքում (նկար 12):


Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2024 թվականի նոյեմբերին «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված դիտարկումների տվյալներով Արարատ քաղաքում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները գտվում են սահմանային թույլատրելի մակարդակում (նկար 13-15):


Երևակման տարածքում մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման գործող կայան չկա:

Որպես մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ելակետային տվյալ ընդունվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ-ի ժամանակավոր առաջարկություններով սահմանված տեղեկատվությունը:





Նկար 14.



Նկար 15.

Աղյուսակ 16.

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	փոշի	ծծմբի երկօքսիդ (SO ₂)	ազոտի երկօքսիդ (NO ₂)	ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Քանի որ ազդակիր Արարատ բնակավայրի մշտական բնակչությունը չի գերազանցում 10000 մարդը, ապա մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը ընդունվում է. փոշի 0.071մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդ 0.006մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ 0.023մգ/մ^3 , ածխածնի օքսիդ 0.8մգ/մ^3 :


4.7 Ջրային ռեսուրսներ

Ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող երևակման տարածքը ծագումնաբանորեն կապված են Արաքս գետի բերվածքային ալյուվիալ-դելկուվիալ առաջացումների հետ: Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ^3 , բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ : Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ^3 և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ : Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ^2 : Գետը բնութագրվում է գարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ $90-103$ օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը $925\text{ մ}^3/\text{վրկ}$: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև $24\text{ մ}^3/\text{վրկ}$:

Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է $167\text{մ}^3/\text{վրկ}$: Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ^3 , բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ : Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000գր/մ^3 և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100կգ/վրկ : Այդ բերվածքները լինում են հատիկային և կախույթային: Հատիկային նստվածքները բաղկացած են ապարների տարբեր ֆրակցիաների հատիկներից, որոնք էլ կախված գերակշռող ֆրակցիայից առաջացնում են ավազակոպճային խառնուրդի կամ ավազի կուտակներ: Կախույթային բերվածքները առաջացնում են կավային և տիղմային նստվածքներ, որոնք բաղկացած են $0.1-1\text{մմ}$ և ավելի փոքր չափսերի հատիկներից: Արաքսի ավազանի նմանատիպ օբյեկտների (մասնավորապես Վանինայի ԱԿԽ հանքավայրի) շահագործման փորձը վկայում է, որ վերականգնվող պաշարները կապված են Արաքս գետի մեկ՝ գարնանային վարարման

հետ: գետի ջրերը քիմիական տեսակետից ագրեսիվ չեն բետոնի, մետաղի և այլ շինանյութերի հանդեպ:

Երևական շրջանում Արաքս գետի ջրերի մոնիթորինգ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվում է Արարատ քաղաքից 0.5կմ ներքև (նկար 16, դիտակետ 28):




Նկար 16.


2024 թվականին հունիսին կատարված դիտարկումների համաձայն Զովեր-1 երևական տարածքին ամենամոտ №28 դիտակետում (հս. լայն. 39.79531°, արլ. երկ. 44.69093°) Արաքս գետի ջրերի որակը գնահատվել է անբավարար՝ 4-րդ դաս:

Հայցվող Զովեր-1 երևական տեղամասը գտնվում է Արաքս գետից 165-205մ հեռավորության վրա, գետից բաժանված է պաշտպանիչ արգելաթմբով: Երևական տարածքը գտնվում է արգելաթմբից 6.8-18.7մ հեռավորության վրա (նկար 17-1):

Տեղամասից 1.1-2.8կմ հեռավորության վրա է գտնվում Կախանովի ջրանցքի համակարգի ենթակառուցվածքները (նկար 17-2):




Նկար 17-1.



Նկար 17-2.

Արարատյան դաշտի սահմաններում (որտեղ է գտնվում է Զովեր-1 տեղամասը) գտնվում է ստորերկրյա քաղցրահամ խմելու ջրերի արտեզյան ավազանը, որը տարածքի էկոլոգիական համակարգի որոշիչ բաղադրիչն է: Ավազանը կազմված է ստորերկրյա ջրերի հինգ ավազաններից (նկար 18), որոնց ջրային ռեսուրսները հաշվարկվել են 1984 թվականին և ներկայցված են աղյուսակ 16-ում:



Նկար 18.


Աղյուսակ 16.

Արարատյան արտգեիան ավազանի ջրային ռեսուրսները

Ստորերկրյա ջրերի ավազանը	Աղբյուրների հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ	Հիմնական հորատանցքերի հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ
Արազդաշտի իջվածք		2138.9
Արտաշատի իջվածք	224.5	3056.7
Գայ-Հայկաշենի հանքավայր		5063.6
Հոկտեմբերյանի իջվածք	18436.6	31880.8
Սովետաշենի բարձրացում	3260.4	9601.8
Ընդամենը	21921.2	51741.8

4.8 Հողային ռեսուրսներ

Նկարագրվող տարածքում զարգացած են մնացորդային ոռոգելի մարգագետնային-գորշ աղուտ-ալկալի սողային-քլորիդային հողերը և աղուտ-ալկալի հողերը (նկար 19):



Նկար 19.

Մնացորդային մարգագետնային գորշ ոռոգելի հողերը տարածված են Արարատյան դաշտի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում, որոնք ընկած են ծովի մակերևույթից 800-950մ բարձրությունների վրա և կապված են Արաքս գետի հինավուրց դարավանդների հետ:

Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային են:

Հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք ունեն 1-3, իսկ որոշ դեպքերում՝ 5մ խորություն: Դրանք ունեն չգատորոշված պրոֆիլ, կլանման բարձր ծավալ, թույլ հիմնային ռեակցիա, կարբոնատների նվազ պարունակություն: Հողերը թույլ ագրեգացված են, միջին շերտերում նկատվում է ամրացվածություն:

Աղուտ-ալկալի հողերը առաջացել են Արարատյան դաշտում ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի (1-2մ) պայմաններում: Հողերն աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավոր մեխանիկական կազմով:

Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոններ, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում՝ 20-25մգէկվ):

Երևակման տարածքում աղուտ-ալկալի հողոնման զանգվածը վրաժաճկում է ավազակոպճային խառնուրդի օգտակար հաստվածքը: Հողանման զանգվածի հզորությունը հասնում է 0.5մ-ի:


Աղուտ-ալկալի հողերով ծածկված հատվածներից 2023թ. հուլիսին կատարվել է նմուշառում: 2 նմուշների վերլուծության արդյունքում ստացվել են հետևյալ միջինացված ցուցանիշները. սիլիցիում- 101245մգ/կգ, մանգան-941մգ/կգ, ֆոսֆոր-867մգ/կգ, պղինձ- 1.1մգ/կգ, նիկել-0.083մգ/կգ և ցինկ-10.5մգ/կգ:

Երևակման տարածքում խախտված և վերականգնված հողեր չկան: Տարածքում չկա նաև կուտակված, պահեստավորված հողաբուսական շերտ:

4.9 Կենսաբազմազանություն

Ձովեր-1 երևակման շրջանի բնական բուսածածկը ներկայացված է հիմնականում տափաստանային, առանձին հատվածներում անապատային աղասեր տեսակներով (նկար 20) :

ՏԱՐԱԾՔԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԻ ՄԻԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Տափաստանային հացազգային, տարախոտահացազգային բուսականություն

Նկար 20.

Դաշտային դիտարկումների ժամանակ արձանագրվել են. սեզ սողացող (*Elytrigia repens* (L.) Nevski.), սեզախոտ անապատային (*Agropyron desertorum* (Fisch. ex Link) Schult.), անապատասեզ խառը (*Eremopyrum confusum* Melderis), հետերանթելիում մազակիր (*Heteranthelium piliferum* (Banks & Sol.) Hochst.), երիզախոտ երկարամազ (*Taeniatherum crinitum* (Schreb.) Nevski), ցորնուկ դաշտային (*Bromus arvensis* L.), գնկոր նրբագեղ (*Aira elegantissima* Schur), շյուղախոտ եղեգանման (*Festuca arundinacea* Schreb.), որոմիկ բզաձն (*Lolium subulatum* (Banks & Sol.) Eig), դաշտավուկ սխուկավոր (*Poa bulbosa* L.), անապատավուկ սրաթեփուկ (*Eremopoa oxyglumis* (Boiss.) Roshev.),

անողնուցուկ սոխուկավոր (*Puccinellia bulbosa* (Grossh.) Grossh.), էխինարիա գլխիկավոր (*Echinaria capitata* (L.) Desf.), դառնալեղի հասկաձև (*Centaureum spicatum* (L.) Fritsch.) : 1

Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը: Ըստ նշված փաստաթղթի, Զովեր-1 երևակման շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- Իշամառոլ արարատյան (*Sonchus araraticus* Nazarova et Barsegian) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է Արարատ ավանի շրջակայքում, ստորին լեռնային գոտում, ծ.մ. 850մ բարձրության վրա, երևակման տարածքից մոտ 5.2կմ հեռավորության վրա,

- տատասկ թևավոր (*Cirsium alatum* (S. E. Gmel.) Bobr.-) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է Արարատ ավանի շրջակայքում, ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800մ բարձրությունների վրա. աղակալված ճահիճներում, երևակման տարածքից մոտ 4կմ հեռավորության վրա,

- սիբեիս սիբեիսանման (*Falcaria falcarioides* (Bornm. et H.Wolff) H.Wolff) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է Արարատ ավանի շրջակայքում, ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. աղակալված հողերի վրա, ճահճացած տեղերում և խոնավ մարգագետիններում, երևակման տարածքից մոտ 3.5կմ հեռավորության վրա,

- կղմուխ Օշեի (*Inula aucherana* DC.), մեխակ քուռի (*Dianthus cyri* Fisch. et Mey.) – վտանգված տեսակներ են, աճում են ստորին լեռնային գոտում, 800-1100մ բարձրության վրա Արարատ ավանի շրջակայքում տրավերտիններում, հանքայնացված ճահճային տեղերում, խոնավ աղուտներում, հանքային աղբյուրների մոտ, ավազոտ ավերին, երևակման տարածքից մոտ 4.5կմ հեռավորության վրա,

- խինձ գորովանի (*Scorzonera gorovanica* Nazarova) – վտանգված տեսակ է, աճում է ստորին և միջին լեռնային գոտում, լոկալիտերն են Արարատը, Գոռավանը և Վեդին, երևակման տարածքից 4-16կմ հեռավորության վրա,

- Օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae* Iljin) – աճում է Երասխ գյուղի մոտակայքում, տեղամասից մոտ 17կմ հեռավորության վրա, ստորին լեռնային գոտում ծ.մ. 700-1000մ բարձրությունների վրա, երևակման տարածքից 11կմ հեռավորության վրա,

- Վարդատերևփուկ թուրանական (*Amberboa turanica* Iljin) – աճում է Խոր Վիրապ ամրոցի մոտ, տեղամասից մոտ 15կմ հեռավորության վրա,
- խոզանափուշ բարալիկ (*Cousinia tenella* Fisch.et Mey.)– վտանգված տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1400 մ բարձրությունների վրա, կիսաանապատում, Դվին բնակավայրի և Խոր Վիրապ ամրոցի շրջանում, երևակման տարածքից համապատասխանաբար 27կմ և 15կմ հեռավորությունների վրա,
- նոնեա բազմագույնանի (*Nonea polychroma* Selvi et Bigazzi) – վտանգված տեսակ է, աճում է ստորին լեռնային գոտում, Խոր-Վիրապ, Արարատ և Վեդի շրջակայքում 800-1000մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերի վրա, երևակման տարածքից 4-16կմ հեռավորության վրա,
- երեքօրնիկ պարսկական (*Hesperis persica* Boiss.) – վտանգված տեսակ է, աճում է ստորին-միջին լեռնային գոտիներում 700-1600մ բարձրությունների վրա՝ Արարատի և Վեդիի շրջակայքում, երևակման տարածքից 4-16կմ հեռավորության վրա,
- նրբախոտ թելատերև (*Leptaleum filifolium* (Willd.) DC.), միկրոկնեմում մարգանանման (*Microcnemum coralloides* (Loscos et Pardo) Font-Quer), ծվծվուկ անապատային (*Silene eremitica* Boiss.), կեղծանկաթաթիկ դիխոտոմիկ (*Pseudoanastatica dichotoma* (Boiss.) Grossh.) - վտանգված տեսակներ են, աճում են ստորին լեռնային գոտում, չոր լանջերում, աղակալած ճահիճներում, կիսաանապատներում՝ Ուրծի լեռների ստորոտին, Արարատի և Վեդիի շրջակայքում, երևակման տարածքից 4-16կմ հեռավորության վրա,
- խլոպուզ ընձյուղավոր (*Merendera sobolifera* Fisch.et Mey.)– կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում 800-850մ բարձրությունների վրա, աղակալված ճահճացած վայրերում, ճմակալված խոնավ մարգագետիններում, հայտնի է Արարատ քաղաքի շրջակայքում, երևակման տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,
- թանթանիկ քառաչափ (*Sedum tetramerum* Trautv) – խոցելի տեսակ է, աճում է ստորին լեռնային գոտում 700-1100մ բարձրությունների վրա, կիսաանապատի քարքարոտ տեղերում, հայտնի է Արարատ քաղաքի շրջակայքից, երևակման տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,
- սֆերոֆիզա աղուտային (*Spaerophysa salsula* DC.) – խոցելի տեսակ է, աճում է Արարատի շրջակայքում, ստորին լեռնային գոտում, 800-900մ բարձրությունների վրա,

աղակալած ճահիճներում, առուների ափերին, հայտնի է Արարատ քաղաքի շրջակայքից, երևակման տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,

- ֆրակնենիա փոշապատ (*Frankenia pulverulenta* L.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, աճում է Արարատի շրջակայքում, ստորին լեռնային գոտում, 800-850մ բարձրությունների վրա աղիավուն ճահիճներում, խոնավ աղուտներում, երևակման տարածքից մոտ 4.5կմ հեռավորության վրա,

- հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica* Fomin) – վտանգված տեսակ է, աճում է Արարատի շրջակայքում, ստորին-միջին լեռնային գոտիներում 700-1500մ բարձրությունների վրա աղիավուն ճահիճներում, մարգագետիններում, ոռոգիչ ջրանցքների ափերին, երևակման տարածքից մոտ 7-10կմ հեռավորության վրա,

- կնյուն սուր (*Juncus acutus* L.) – վտանգված տեսակ է, աճում է Արարատի շրջակայքում 800-1000 (1200մ) բարձրությունների վրա, աղակալած ճահիճներում, հանքային աղբյուրների և տրավերտինների մոտ, աղուտային խոնավ հողերի վրա, երևակման տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,

- կնճիթաթերթիկ սապատավոր (*Rhinopetalum gibbosum* (Boiss.) Losinsk. et Vved.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է Վեդիի, Գոռավանի, Արարատի շրջակայքում ստորին լեռնային գոտում, չոր կավա-խճաքարոտ, ավազոտ, քարքարոտ լանջերին, ավազային անապատում և կիսանապատում, երևակման տարածքից մոտ 4-16կմ հեռավորության վրա,

- կտավատ Բարսեղյանի (*Linum barseghianii* Gabr. et Dittr.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, աճում է Արարատ ավանի շրջակայքում ստորին լեռնային գոտում, կյունա-հիրիկային աղակալված ճահիճներում, երևակման տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,

- դևազի հատված (*Cistanche fissa* (C.A.Mey.) G.Beck) – վտանգված տեսակ է, աճում է Արարատի շրջակայքում ստորին լեռնային գոտում, աղուտներում, աղակալված հողերի վրա, երևակման տարածքից մոտ 5կմ հեռավորության վրա,

- անողնուցուկ Գրոսհեյմի (*Puccinellia grossheimiana* V.I.Krecz.) - վտանգված տեսակ է, աճում է Արարատի շրջակայքում ստորին և վերին լեռնային գոտիներում, լճերի և գետերի ափին, հղկված գլաքարերի և մերկացված գրունտների վրա, երևակման տարածքից մոտ 5-10կմ հեռավորության վրա,

- արմատազլխիկ արևելյան (*Rhizocephalus orientalis* Boiss.)– խոցելի տեսակ է, հայտնի է Գոռավանի շրջակայքից և Ուրծի լեռնաշղթայի նախալեռնային հատվածում, չոր քարքարոտ գիպսակիր և կավային լանջերին, երրորդական դարաշրջանի կարմիր կավերի վրա, երևակման տարածքից մոտ 14-18կմ հեռավորության վրա,
- թեզիում սեղմված (*Thesium compressum* Boiss. et Heldr.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի Արարատ բանավանի շրջակայքի աղակալված ճահիճներում, երևակման տարածքից մոտ 4.5կմ հեռավորության վրա:

Երևակման տարածքում մանրագննին դիտարկման արդյունքում վերը նշված՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները չեն դիտարկվել:

Տարածքներում հանդիպում են ամենուր զարգացած ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, կապտաթիթեռ, մոծակ, դաշտային ճանճեր:

Գետի ջրերում հանդիպում են թեփուկ, ճանառ, լոք, կամրմրախայթ:

Արաքս գետն ունի կարևոր օրնիթոլոգիական նշանակություն: Թռչունների ամենամեծ կուտակումները տեղի են ունենում «Խոր վիրապ» պետական արգելավայրի և Արմաշ բնակավայրի սահմանամերձ տարածքներում: Այստեղ յուրաքանչյուր տարի բնադրում են փոքր ձկնկուլը, քաջահավը, տառեղը, տարգալակտուցը, մկնաճուռակը: Հանդիպում են միգրացիոն ջրլող թռչուններ՝ կարապներ, բադեր, սագեր, իսկ մշտական բնադրող տեսակներից են արագիլները, ճահճային տեսակները, ագռավագլխերը:

Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշումը: Ըստ նշված փաստաթղթի, երևակման շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- սիմպեկտա ճպուռ (*Sympecma paedisca*) – հազվագյուտ տեսակ, հայտնի է լճացված ջրերով ջրամբարներում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, երևակման տարածքից մոտ 25կմ հեռավորության վրա,

- թամբակիր ճպուռ (*Hemianax ephippiger*) – հազվագյուտ տեսակ, հայտնի է կիսաանապատային գոտու մանր, տաք, հաճախ ժամանակավոր ջրամբարներում և լճերում, պահպանության միջոցառումներ չեն իրականացվում,

- մորեխ ելունդավոր (*Nocarodes nodosus* Mistschenko) – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Վեդի քաղաքի շրջակայքից, պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում, երևակման տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա,

- Ռուբենյանի բնդեռիկ (*Adoretus rubenyani*), Արաքսյան չրիկան (*Cardiophorus araxicola* Khnzorian), փոքր չրիկան (*Craspedostethus permodicus*), մորթիավոր ոսկեբզեզ (*Acmaeoderella pellitula*) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Արմաշ գյուղի (երևակման տարածքից մոտ 7կմ) և Վեդի քաղաքի (տեղամասից մոտ 16կմ) շրջակայքից: Ռուբենյանի բնդեռիկ տեսակի պահպանության միջոցառումներ չեն իրականացվում, իսկ Արաքսյան չրիկանը, մորթիավոր ոսկեբզեզը և փոքր չրիկանը պահպանվում են «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում (երևակման տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա),

- Սեմյոնովի սևամարմին (*Cyphostethe semenovi* Reitter) և Անդրկովկասյան կապտաթիթեռ (*Plebejus transcaucasicus*) - սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Վեդի քաղաքի շրջակայքից (երևակման տարածքից մոտ 16կմ), պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում երևակման տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա),

- պրոզերպինա իլիկաթիթեռ (*Proserpinus proserpina*) – խոցելի տեսակ է, հայտնի է Վեդի քաղաքի շրջակայքից (երևակման տարածքից մոտ 16կմ), պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում (երևակման տարածքից մոտ 25կմ հեռավորության վրա),

- Կարելինի մռայլ արջաթիթեռ (*Axiopoena karelini* Ménétrés) - սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է, հայտնի է Վեդի քաղաքի շրջակայքից (հայցվող տեղամասից մոտ 16կմ հեռավորության վրա), պահպանություն չի իրականացվում,

- հսկա գիշաճանճ (*Satanas gigas* Evermann)- սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է, հայտնի է Վեդի քաղաքի շրջակայքից (երևակման տարածքից մոտ 16կմ), պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում (երևակման տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա):

- փոքր ճագարամուկ (*Allactaga elater*) - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով: Այն տարածված է Արարատի մարզում 800-1200մ բարձրությունների վրա: Սովորաբար հանդիպում է կավային և խճաքարային կիսաանախատներում, աղուտներում և փոքր ավազուտներում:

- կանաչ մեղվակեր (*Merops persicus* Pallas)- հազվագյուտ տեսակ է սահմանափակ արեալով, տարածված է Արարատյան հարթավայրի կիսաանապատային տեղանքներում:

- ճչան կարապ (*Cygnus cygnus*) – հազվագյուտ տեսակ, հանդիպում է Արարատյան հարթավայրի ձկնաբուծական լճակներում:

- ջրարծիվ (*Pandion haliaetus*) – սակավաթիվ, վտանգված տեսակ, հանդիպում է Արաքս գետի հովտում:

- սուլթանական հավ (*Porphyrion porphyrio*) - սակավ ուսումնասիրված տեսակ է, հանդիպում է Արաքսի հովտում, Արարատի շրջանում,

- տափաստանային ծիծեռնակոցար (*Glareola nordmanni* J. G. Fischer) - Հայաստանում հազվագյուտ, չուի շրջանում հանդիպող տեսակ է, չուի շրջանում հանդիպում է Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

2023 թվականի մայիս-հունիսին Զովեր-1 երևակման հայցվող տարածքում կատարված դիտարկումների ժամանակ վերը նշված՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների բնադրավայրեր չեն հայտնաբերվել:


Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ տվյալները համադրվել են նաև ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասնագետների կողմից մշակված օնլայն ատլասի տվյալների հետ (<https://ace.aua.am/hy/gis-and-remote-sensing/maps/red-book-of-armenia/>):

Ստորև ներկայացվում են նաև ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասնագետների կողմից մշակված օնլայն ատլասի թվով 12 քարտեզների և հայցվող տարածքի համադրման արդյունքները:


Հստակ երևում է, որ հայցվող տարածքը չի հանդիսանում.

- ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված գետնամուշկ, ծածկասերմ, մերկասերմ, պտերանման բույսերի և սնկերի աճելավայր/լոկալիտ;




- ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված երկկենցաղ, երկփեղկանի, կաթնասուն, միջատ, սողուն, փոքրոտանի տեսակների կամ ձկների ապրելավայր:



Նկար 21.



Նկար 22.




Նկարներ 23-25.

ՀԱՅՑՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ԵՎ ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԱՊՐԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




Նկար 26.


ՀԱՅՑՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ԵՎ ԵՐԿՓԵՐԿԵՐԻ ԱՊՐԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ





Նկար 27.




Նկար 28.



Նկար 29.





Նկար 32.

4.10 Անտառային ռեսուրսներ

Անտառային բուսականության, անտառապատ մակերեսներ բուն երևակման տարածքում, ինչպես նաև հարակից շրջաններում չկան:

4.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Զովեր-1 երևակման տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Արարատի մարզում, երևակման տարածքից մոտ 25կմ հեռավորության վրա է գտնվում «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա, տեղամասից ավելի քան 25կմ հեռավորության վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները

զբաղեցնում են տարածքի մեծ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզուարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսակներ, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Երևակման տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա է գտնվում «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում (10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում): Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Հայցվող տեղամասից մոտ 15կմ հեռավորության վրա գտնվում «Խոր վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի

ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձաքաղաքյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

2) խոնավ տարածքի էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

5) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ :

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 17.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1.	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա

1	2	3
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքա-գոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեղի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեղի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեղի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
11.	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող երևակման հեռավորությունը մինչև մոտակա «Աղակալած ճահճուտ» բնության հուշարձանը կազմում է մոտ 7կմ, հետևաբար ծրագրավորվող աշխատանքները չեն կարող որևիցե կերպ ազդել հուշարձանների վրա:

4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Արարատ գյուղական բնակավայրում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 19-ում:

Հուշարձանի/խմբի համարը, ենթահամարը				Անվանումը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը
1				2	3	4
1.				ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	19-20 դդ.	հվ-ամ մասում
2.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԽՆՈՒՏ»	10-17 դդ.	32 կմ ան
	2.1.			գերեզմանոց	10-17 դդ.	
		2.1.1.		խաչքար	9-10 դդ.	
		2.1.2.		խաչքար	14-15 դդ.	
		2.1.3.		տապանաքար	16 դ.	
		2.1.4.		տապանաքար	16 դ.	
3.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՋԵՐՄԱՆԻՍ»	10-17 դդ.	35 կմ հս-ան
	3.1.			եկեղեցի	12-13 դդ.	
		3.1.1.		խաչքար	13 դ.	
		3.1.2.		տապանաքար	15-16 դդ.	
	3.2.			գերեզմանոց	10-17 դդ., 20 դ.	
		3.2.1.		խաչքար	12-13 դդ.	
		3.2.2.		խաչքար	12-13 դդ.	
		3.2.3.		խաչքար	13 դ.	
		3.2.4.		խաչքար	13-14 դդ.	
		3.2.5.		խաչքար	14-15 դդ.	
	3.3.			խաչքար	12-13 դդ.	
	3.4.			խաչքար	12-13 դդ.	
	3.5.			խաչքար	12-13 դդ.	
4.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ՀԱԿՈԲ	1866 թ.	հվ-ան մասում
	4.1.			զանգակատուն	1891 թ.	
5.				ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ ԱՐԱՐԱՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1976 թ., 1978 թ.,	գ. մ.
	5.1.			հուշարձան Արարատի հիմնադրման 150-ամյակին	1978 թ.	
	5.2.			հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1976 թ.	

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում (Արարատ բնակավայրից մոտ 4.4կմ հարավ-հարավ-արևմուտք) պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

4.13 Ազդակիր համայնքը

Ինչպես արդեն նշվել է, Զովեր-1 ավազակոպճային խառնուրդի երևակումը գտնվում է Արարատ խոշորացված համայնքի Արարատ գյուղական բնակավայրի տարածքում:

Նախկինում ունեցել է Դավալի, Դավալու, Դեվրլու անվանումները: Եղել է Երևանի նահանգի Երևան գավառի մեջ: Վերանվանվել է 1935 թ-ին:

Բնակավայրում գրանցված են թվով 11 արտադրական ձեռնարկություններ՝ մոտ 120 աշխատատեղով: Ըստ գործունեության բնագավառների՝

- սննդամթերք արտադրող ձեռնարկություններ – 7
- գովացուցիչ ըմպելիք և հանքային ջրեր արտադրող ձեռնարկություններ – 1
- կահույք արտադրող ձեռնարկություններ – 1
- շերտավարագույր և ոսկերչական իրերի պատրաստում – 2:

Գործող առավել մեծ արտադրական հետևյալ ձեռնարկություններն են .

- <<Արարատի Աբրիկոն>> ՍՊԸ (գյուղմթերքի վերամշակում) - արտադրանքը՝ ծիրանի օղի,
- <<ԱրմԳարՊրոդ>> ՍՊԸ (գյուղմթերքի վերամշակում) - արտադրանքը՝ պահածոներ,
- <<Արարատի գինու գործարան>> ՍՊԸ (գյուղմթերքի վերամշակում) - արտադրանքը՝ գինի, օղի, կոնյակ,
- <<Լավաշ Ժորա>> ԱԿ (քաղցրավենիքի պատրաստում) - արտադրանքը՝ հրուշակեղեն, քաղցրավենիք:

Համայնքում գործում է մեկ առողջապահական կազմակերպություն՝ Բուժ.

Ամբուլատորիա 14 աշխատատեղով: դեղատներ – 3-ը:

Գյուղական բնակավայրի վարչական տարածքը 6798.17 հա է, այդ թվում՝

- արտադրական նշանակության հողեր 577 հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր 4449.9 հա,
- հանգստի գոտիներ 3 հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր 1011.5 հա,
- ջրային ֆոնդի հողեր 357.3 հա:

Բնակավայրի տարաքքը կազմում է 381.478 հա: Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը 2100 է, սեփականաշնորհված հողի մեկ հողաբաժնի չափը՝ 0.38 հա: Համայնքի սեփականություն համարվող հողերը մակերեսը 2368.6 հա է:

Գյուղատնտեսության բնագավառի զարգացած ճյուղեր են անասնապահությունը (խոշոր և մանր եղջրավոր անասուն, խոզեր, ձիեր, թռչուններ) և հողագործությունը:

Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում են 1325.43հա, որից՝ համայնքային սեփականություն 176.5 հա, բազմամյա տնկարկներ 224.01 հա (այդ թվում պտղատու այգի 32.6 հա, խաղողի այգի 191հա), վարելահող 723.53հա:

Արտադրվում են հետևյալ գյուղատնտեսական մթերքները

- բանջարային մշակաբույսեր՝ լոլիկ, տակդեղ, սմբուկ, կարտոֆիլ, սխտոր, սոխ, կանաչի,
- բոստանային մշակաբույսեր՝ ձմերուկ, սեխ, վարունգ, դդում, դդմիկ:

Դաշտամիջյան ճանապարհների վիճակը՝ հողագրունտային: Գյուղատնտեսական տեխնիկայի քանակը՝ 25:

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է ապահովված գոտում: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է «Վիոլա- ջուր» ՓԲԸ-ի կողմից: Խմելու որակի ջրի պաշարներով ապահովված չէ: Սակայն խմելու ջրի ներահամայնքային ցանցի 90 և ավել տոկոսը ջրագծերը փոխարինված են: Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրահեռացման ցանցի տեխնիկական վիճակը: Ջրահեռացման կոյուղագծերով ապահովված է համայնքի 30 տոկոսը, որը գտնվում է նորմալ վիճակում: Իսկ համայնքից դեպի մաքրման կայան գնացող կոլեկտորը և համայնքի տարածքում գտնվող մաքրման կայանը չի գործում,

Արարատ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլցանցներ» ընկերության կողմից: Արարատ համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ – Արմենիա» ընկերության կողմից:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի հողերը հաշվառված են որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր (03-015-0469-0063 ծածկագրի հողատարածքը՝ այլ հողեր, 03-015-0469-0064 ծածկագրի հողատարածքը՝ արոտավայր): Հողերը վարձակալված են «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերության կողմի (հավելված 1-ում ներկայացված են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ տվյալները և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են

համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման, ինչպես նաև համայնքին սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման հարցը:

4.14. Այլընտրանքային տարբերակներ

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման այլընտրանքային տարբերակներ ներկայացնել հնարավոր չէ, քանի որ հետախուզական աշխատանքների մեթոդաբանությունը՝ հետախուզական ցանցի խտությունը, նմուշարկման ծավալները, փաստագրման աշխատանքների իրականացումը, հարակից բոլոր գործողությունների իրականացումը ամրագրված և որոշված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի 06-Ն հրամանի հավելված 2-ի պահանջներով:

Այլընտրանքային լուծումներ ներկայացվել են հետախուզահորերի տարածքների ռեկուլտիվացիայի հետ կապված: Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է ավազակոպձային խառնուրդի զանգված, կավային հիմնատակող ապարներ և մոտ 48մ³-ը հողաբուսական շերտ: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 96մ²: Հետախուզահորերի անցման սկզբնական փուլում հեռացված հողաբուսական շերտը կարճաժամկետ կուտակվում է հետախուզահորերի հարակից հատվածում և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվում են խախտված հողատարածքների վերականգնման համար:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի ընթացքում հարթեցված մակերևույթին փոխված հողերը կպարարտացվեն բնական պարարտանյութերի կիրառմամբ, վրան կկատարվի բազմամյա, անապատային աղասեր բույսերի սերմերի ցանք: Աշխատանքները կատարվելու են բուսաբան-մասնագետի կողմից, ով իրականացնելու է սերմերի ընտրության, նախապատրաստման աշխատանքներ՝ մշակում բակտերիալ պարարտանյութերով, միկրոտարրերով, այնուհետև սերմերի ցանք և հսկողություն:

Զրոյական (հրաժարման) տարբերակ չի դիտարկվում, քանի որ հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներից վճարվող հարկերը հանդիսանում են ՀՀ պետական բյուջեի համալրման հիմնական հողվածքներից մեկը: Համաայն ՀՀ ֆինանսաների նախարարության տվյալների՝ ՀՀ 2024 թ. պետական բյուջեի

դեֆիցիտը կկազմի 340 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3.2 տոկոսը : Հետևաբար, նախատեսվող գործունեությունը նպաստելու է պետական բյուջեի դեֆիցիտի կրճատմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովմանը :

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքներով նախատեսվում է երևակման ավագակոպճային խառնուրդի պաշարները, ինչը թույլ կտա անցնել շահագործման փուլին :

Հետևաբար, ծրագրի իրականացման հեռանկարային արդյունքն է՝ նոր աշխատատեղի ստեղծում, նոր արտադրատեսակների թողարկում, առևտրային շղթաների ձևավորում/ակտիվացում, ֆինանսական աջակցություն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին :

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա

Մթնոլորտային օդի վրա նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության ազդեցության գնահատումը կատարվել է հաշվի առնելով աշխատանքների տեխնիկական բնութագրերը, տեղանքի ռելիեֆը, աշխատանքների շրջանի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական պայմանները:

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման՝ տեղանքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունն ստացվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կայքից: Եթե տվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային աղտոտվածության վերաբերյալ բացակայում է, ապա 250000 մարդուց պակաս բնակելի տարածքների համար ֆոնային աղտոտվածության խտություններն ամենատարածված աղտոտող նյութերի համար ընդունվում են՝ ծծմբի երկօքսիդի համար՝ 0.1 մգ/մ³, ազոտի օքսիդների համար՝ 0.03 մգ/մ³, ածխածնի օքսիդի համար՝ 1.5 մգ/մ³, չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.2 մգ/մ³:

Հայցվող տարածքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներն են հետախուզական փորվածքների անցման աշխատանքները և ավտոտրանսպորտի տեղաշարժը:

Արտանետման տեսակներն են՝

- ✓ փոշի – հետախուզահորերի անցման հետ կապված,
- ✓ վնասակար գազեր - առաջանում են շարժիչներում վառելանյութի այրումից, սարքավորումների տեխսպասարկման ու վերանորոգման աշխատանքներից:

Հայցվող տարածքում կանխատեսվում է 0.083գ/վրկ փոշու արտանետում, որը կրում կարճատև բնույթ:

Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Զովեր-1 երևակման տարածքում մակերևութային ջրային հոսքեր չկան, չկան նաև ստորգետնյա ջրային հորիզոններ: Հետևաբար, ջրային ռեսուրսների վրա ազդեցություն ծրագրավորվող աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

Առաջանալու են կենցաղային կեղտաջրեր, որոնք հավաքվելու են անջրթափանց հորի մեջ:

Տարածքի տեխնիկական ջրամատակարարման համար նախատեսվում է ջուրը վերցնել Արաքս գետից, այդ նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը նախատեսվում է գնել մոտակա Արարատ, Նոյակերտ, Սուրենավան բնակավայրերի առևտրի կետերից շաղցված տարբերակով և աշխատանքները սպասարկող մեքենայով տեղափոխել երևակման տարածք:

Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը լինելու է խիստ սահմանափակ: Նախքան հետախուզահորերի անցումը նախատեսվում է 36մ² տարածքից (24 հոր յուրաքանչյուրը 1.5մ² կտրվածքով) էքսկավատորի կիրառմամբ հեռացնել 0.5մ հզորությամբ աղուտ-ալկալի հողային շերտը, հավաքել այն դարսակույտի տեսքով հորերի մոտակայքուն և այնուհետև օգտագործել ռեկուլտիացիոն աշխատանքների ժամանակ: Դաշտային աշխատանքները և, հետևաբար, աղուտ-ալկալի հողերի հանման հետ կապված գործողությունները կատարվելու են տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Հողային շերտի պահում չի նախատեսվում, նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո (տևողությունը՝ 1-2 օր) անմիջապես կատարվելու է ռեկուլտիվացիա, որի ժամանակ օգտագործվելու է հանված աղուտ-ալկալի հողերը: Հողի շերտի տեղափոխում չի կատարվելու, այն կարճաժամկետ կտրվածքով (տևողությունը՝ 1-2 օր) կուտակվելու է անմիջապես հետախուզական հորի մոտ:

Հնարավոր է նաև հայցվող տարածքի աղտոտում նավթամթերքներով, ինչը կապված է ավտոտրանսպորտի տեղաշարժի հետ:

Ճանապարհների շինարարության համար հողերի օտարում չի պահանջվում, քանի որ աշխատանքների ընթացքում օգտագործվելու են բարվոք վիճակում գտնվող գոյություն ունեցող բնահողային ճանապարհները:

Ազդեցություն կենսաբազմազանության վրա

Հայցվող տարածքի սահմաններում դիտարկվել է տափաստանային տարածոտահացազգային բուսականություն, որը ներկայացված է ՀՀ տարածքում լայն տարածքում ունեցող ֆոնային բուսատեսակներով: Աշխատանքների ընթացքում կարճաժամկետ կտրվածքով բուսածածկը խախտվելու է հետախուզահորերի 36մ² տարածքում:

Կենդանիների համար կատարվելիք հետախուզական աշխատանքները, դրանց հետ կապված աղմուկն ու թրթռումները հանդիսանալու են անհանգստացնող գործոն: Կանխատեսվում է կենդանիների կարճատև միգրացիա երկրաբանական

ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքից՝ բնական ապրելավայրերի/լանդշաֆտների փոփոխության պատճառով:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Ձովեր-1 երևակման և հարակից տարածքները չեն հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք, բնության հուշարձաններ երևակման տարածքում հաշվառված չեն:

Հետևաբար, պահպանվող էկահամակարգերի վրա որևցե ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող հետախուզական փորվածքների անցման անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը ազդակիր Արարատ գյուղական բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը արտադրական հրապարակում ընդունված է 80 դԲԱ, բնակելի գոտում՝ 45 դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր Արարատ բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հայցվող տեղամասում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ,

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 15դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք), $\Delta LA_{էկր}$ = 10դԲԱ,

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ}$ = 10դԲԱ:

Աղմուկի մակարդակը Արարատ գյուղի մոտ կկազմի՝

$La_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 65 - 15 - 10 - 10 = 30$ դԲԱ (նորման 45դԲԱ):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Ընդերքօգտագործման թափոններ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու: Հետախուզահորերից հանված լեռնային զանգվածը (ավազակոպճային խառնուրդ, կավային առաջացումներ) նմուշարկումից հետո հետ է լցվելու հորերի տարածք, կատարվելու է ռեկուլտիվացիա նախապես հեռացված հողաբուսական շերտի կիրառմամբ: Հողաբուսական շերտը ընդերքօգտագործման թափոն չի հանդիսանում: Այն կարճաժամկետ կտրվածքով տեղադրվելու է հետախուզական փորվածքների մոտակայքում, այնուհետև օգտագործվելու է ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Վառելիքի լիցքավորումը, օգտագործված քսայուղերի և յուղերի (բանեցված դիզելային յուղեր, ծածկագիրը՝ 5410020302033 և բանեցված ավտոմոբիլային յուղեր, ծածկագիրը՝ 5410020202033) փոխարինումը կատարվելու է մոտակա Արարատ, Նոյակերտ, Սուրենավան բնակավայրերում՝ համապատասխան մասնագիտացված ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Հետևաբար, բուն երևակման տարածքում նավթամթերքներով, դրանց մնացորդներով ներկայացված թափոններ չեն առաջանալու:

Առաջանալու է կենցաղային աղբ: Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան, սննդամթերքի մնացորդը և այլն, օրական 10կգ առավելագույն քանակությամբ: Այս թափոնները կտեղափոխվեն համայնքի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայրերը: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ նախատեսվում է կնքել աղբահանության պայմանագիր, կատարել համապատասխան վճարումներ: Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

Պատմամշակութային միջավայր

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում (Արարատ բնակավայրից մոտ 4.4մ հարավ-հարավ-արևմուտք) պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն: հայցվող տարածքները բնակավայրի կադաստրային քարտեզում հաշվառված են որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատարածքներ:

Հետևաբար, պատմամշակութային հուշարձանների վրա որևիցե ազդեցություն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով չի դրսևորվելու:

Սոցիալ-տնտեսական ազդեցություն

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները իրականացվելու են Արարատ խոշորացված համայնքի Արարատ գյուղական բնակավայրի վարչական տարածքում:

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա:

Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովելու նպատակով՝ «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲԸ-ի կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացվելու են հանրային լսումներ և քննարկում, որոնց ընթացքում դիտարկվելու են համայնքներին աջակցության հնարավոր միջոցառումները:

Համայնքների նպատակային աջակցության միջոցառումներ մշակելու նպատակով աշխատանքն իրականացվելու է համայնքապետարանի հետ՝ պարզելու համար առաջնային լուծում պահանջող սոցիալական խնդիրները: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում համայնքապետարանի հետ համաձայնեցված իրականացվելու են սոցիալական աջակցության ծրագրեր: Կատարվելու է ելակետային պայմանների հավաքագրում:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը պիտի միտված մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

- նոր աշխատատեղերի ստեղծում: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ՝ վարորդներ, տեխնիկական ջրի մատակարարում, աշխատակիցներին սննդի մատակարարում և այլն) իրականացման համար հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջվում: Հետևաբար, այդ աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների

բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար: Միաժամանակ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնող անձնակազմի սննդի ապահովման նպատակով գնումներ են կատարվելու հենց համայնքներում, ինչը նույնպես դրական ազդեցություն է ունենալու ապրանքաշրջանառության ծավալի, տեղական արտադրանքի սպառման շուկայի վրա:

- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում՝ նոր, մշակում և ներդրում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության, այդ թվում բուսական ծածկույթի դիտարկում, ուսումնասիրություն՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ: Առանձնահատուկ ուշադրություն է նախատեսվում դարձնել դեղաբույսերի տեսակի և տարածման արեալների վրա: Հետազոտվելու են նաև տարածքում աճող ուտելի և համեմունքային բույսերը, ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է համայնքներին՝ որպես արտադրական նոր շղթաների ձևավորման ելակետային տվյալ:

Միաժամանակ, «Մագնոլիա Կոմֆորտ» ՓԲ ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով:

Աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 36մ^2 կամ 0.0036հա : Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքին կկազմի $0.0036\text{հա} \times 3500000 = 12600$ դրամ:

Սանիտարական պահպանության գոտի

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ:

6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ

Հայցվող տեղամասը գտնվում է Արարատ խոշորացված համայնքի Արարատ գյուղական բնակավայրի սահմաններում: Մոտակա Նոյակերտ, Արարատ և Սուրենավան գյուղերի բնակելի հատվածներից Զովեր-1 երևակման տարածքը գտնվում է համապատասխանաբար 4.9կմ, 4.4կմ և 6.1կմ հեռավորությունների վրա, հետևաբար ավագակոպչային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության լոկալ բնույթ ունեցող և կարճատև աշխատանքների արդյունքում քաղաքային բնակչության առողջության վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Տեղամասի տարածքում աշխատողների առողջության վրա ազդեցությունները կապված են լինելու հետևյալ գործոնների հետ.

1. Շնչառական խնդիրներ, որոնք պայմանավորված են հետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջացող փոշու արտանետումներով;
2. Լսողական խնդիրներ, որոնք պայմանավորված են ծանր տեխնիկայի աշխատանքի ժամանակ առաջացող ձայնային ազդեցություններով:

Աշխատակիցների առողջության համար ռիսկերը բացառելու/չեզոքացնելու նպատակով նախատեսվում է տարածքի ջրցանում/խոնավեցում, ինչի նպատակն է փոշու արտանետումների կրճատում: Միաժամանակ, հանքի տարածքում շաբաթական մեկ անգամ կատարվելու է մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաների մոնիթորինգ, ինչը թույլ կտա հսկել իրականացվող գործունեության համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին:

Հանքի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջանալու է փոփոխական ընդհատվող աղմուկ:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի № 138 հրամանի մեքենաների վարորդների և սպասարկող անձնակազմի աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 80դԲԱ: Տեղամասի տարածքում կանխատեսվող ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 65դԲԱ, ինչը

բավարարում է նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Ձայնային ազդեցությունը անձնակազմի առողջության վրա նվազեցնելու համար աշխատակիցները կրելու են ձայնամեկուսիչ ականջակալեր: Հանքի տարածքում պարբերաբար կատարվելու է նաև ձայնի մակարդակի մոնիթորինգ:

Տեղամասում տեղադրվելու է վազոն-տնակ, որտեղ կազմակերպվելու է աշխատակիցների հանգստի և սնունդ ընդունելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Վազոն-տնակները կահավորվելու են անհատական պահարաններով՝ ըստ աշխատակիցների քանակի: Կազմակերպվելու է լվացարան, որը մշտապես ապահովված է լինելու անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաներով, ջրով:

Կազմակերպվելու է հորային տիպի 1-աչքանի արտաքնոց:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա աշխատանքների ընթացքում:

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ.

- Աշխատանքները սպասարկող տեխնիկական միջոցները՝ մեքենաները պետք է կահավորված լինեն արդիական փոշեռսիչներով, ինչը զգալիորեն նվազեցնում է հանքափոշու արտանետումները մթնոլորտ;
- կիրառվող ավտոտրանսպորտի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը;
- մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրված են կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է տալիս կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ;
- տաք և չոր եղանակին հետախուզահորերի անցման վայրերի և մոտեցնող ճանապարհի ջրցանում (առավոտյան և երեկոյան), ինչը թույլ է տալիս կրճատել փոշու արտանետումները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

Ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.

- Կենցաղային կեղտաջրերի հավակում անջրաթափանց հորի մեջ, աշխատանքների ավարտից հետո հորի դատարկում հատուկ ծառայության ուժերով և հորի լցում քարերով;
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության ստացում՝ տեխնիկական ջրամատակարարումը կատարելու համար:

Հողային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է ավազակոպճային խառնուրդի զանգված, կավային հիմնատակող ապարներ և մոտ 48մ³-ը հողաբուսական շերտ: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 96մ²:

Հետախուզահորերի անցման սկզբնական փուլում հեռացված հողաբուսական շերտը կարճաժամկետ կուտակվում է հետախուզահորերի հարակից հատվածում և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվում են խախտված հողատարածքների վերականգնման համար: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 127.0հազ. դրամ:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա:

Կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը ընդգրկում է հետևյալ ծախսատեսակները՝ աշխատավարձը, նյութերի արժեքը, մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքը, անուղղակի ծախսերը, շահույթը, ավելացված արժեքի հարկը և այլ ծախսեր: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքներից հետո, հարթեցված մակերևույթին փոված հողերը կպարարտացվեն բնական պարարտանյութերի կիրառմամբ, վրան կկատարվի բազմամյա, անապատային աղասեր բույսերի սերմերի ցանք:

Աշխատանքները կատարվելու են բուսաբան-մասնագետի կողմից, ով իրականացնելու է սերմերի ընտրության, նախապատրաստման աշխատանքներ՝ մշակում բակտերիալ պարարտանյութերով, միկրոտարրերով, այնուհետև սերմերի ցանք և հսկողություն: Աշխատանքների կատարման համար գնման ենթական նյութերն են՝ մետաղյա բահեր, փոցիներ, դուլեր, արտահագուստ, բնական ցեղիտային հումքով պատրաստված պարարտանյութ, բազմամյա խոտաբույսերի և լոբազգիների սերմ, բակտերիալ պարարտանյութեր և միկրոտարրեր, սերմերի ծլեցման ամաններ: Այս աշխատանքների համար կպահանջվի 145.0հազ.դրամ գումար:

Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 272.0հազ.դրամ: Հաշվի առնելով անուղղակի և չնախատեսված ծախսերը, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կհատկացվի 313.62հազ.դրամ:

Աղյուսակ 21.

N	Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Գումարը, հազ.դրամ
1.	Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեք (վառելիք, էքսկավատորի վարորդի աշխատավարձ)	հազ.դրամ	55.0
2.	Հողային զանգվածի փոման աշխատանքների արժեք (96մ ² x750 դրամ)	հազ.դրամ	72.0

1	2	3	4
3.	Ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի նյութեր, տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ	65.0
4.	Բուսաբան-մասնագետի աշխատավարձ	հազ.դրամ	80.0
	Ընդամենը	հազ.դրամ	272.0
5.	Անուղղակի ծախսեր	հազ.դրամ	14.42
6.	Չնախատեսված ծախսեր	հազ.դրամ	27.20
	Ընդհանուրը	հազ.դրամ	313.62

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարվելու է նաև հայցվող տարածքի հողային ծածկույթի մոնիթորինգ:

Կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ.

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ;
- Արարատի մարզում հանդիպող տափաստանային ծիծեռնակտցար տեսակի պահպանության նպատակով նախատեսվում է դաշտային աշխատանքներին մասնակցող մասնագետներին իրազեկել ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված այս տեսակի, դրա կենսաբանության առանձնահատկությունների և որսորդության արգելքի մասին:
- Տափաստանային ծիծեռնակտցար տեսակի պահպանության նպատակով չուի ժամանակաշրջանում՝ մարտ-ապրիլ ամիսներին, դաշտային աշխատանքները նախատեսվում է դադարեցնել, բացառել անհանգստացնող գործոնները՝ աղմուկը, մարդկանց և տեխնիկայի առկայությունը տեղամասում: Մարտ-ապրիլ ամիսներին իրականացնել տարածքի դիտարկում մասնագիտացված ընկերության ներգրավմամբ՝ պայմանագրային հիմունքներով:
- Արարատի դաշտում, Արաքսի հովտում հանդիպող սուլթանական հավ տեսակի պահպանության նպատակով նախատեսվում է դաշտային աշխատանքներին մասնակցող մասնագետներին իրազեկել ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված այս տեսակի, դրա կենսաբանության առանձնահատկությունների մասին, կենսաբազմազանության մշտադիտարկումների ժամանակ ուսումնասիրել նաև այս տեսակը:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ), որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմինն):

Հոդերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- 1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.
- 2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.
- 3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխել բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել

համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետազայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- աղմուկի մակարդակի վերահսկողություն՝ կենդանիների համար անհագստացնող գործոնների նվազեցման համար;
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա, փոված հողի վերին շերտի փխրեցում և պարարտացում բնական պարարտանյութերով՝ բույսերի բնական վերաճը խթանելու նպատակով;
- նախքան հետախուզահորերի անցումը կկատարվի տարածքի կրկնակի զննում՝ թռչունների բները հայտնաբերելու և տեղափոխելու նպատակով;
- նախքան հետախուզահորերի անցումը կկատարվի տարածքի կրկնակի զննում՝ սողունների հայտնաբերման և տարածքից տեղափոխման նպատակով;
- ռերկրաբանական երթուղիների ժամանակ մասնագետների կողմից կատարվելու են հարվածներ ձեռնափայտով, ինչի արդյունքում ձևավորվող ալիքները սողունների համար դառնալու են անհանգստացնող գործոն և ստիպելու են հեռաբալ տարածքից, դա իր հերթին թույլ կտա բացառել մարդ-սողուն ընդհարումը;
- բուսածածկի և կենդանական աշխարհի պարբերական մոնիթորինգ:

Ընդերքօգտագործման և արտադրական թափոններով աղտոտման կանխարգելում.

- Հետախուզահորերից հանված նյութի հետլցնում, տարածքի ռեկուլտիվացում;
- չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով, սպասարկման պայմանագրի կնքում ծառայություն մատուցող կազմակերպության հետ, վճարների իրականացում:

Աղմուկի և տատանումների կառավարում.

- աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով;
- բաց դիմածածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում:

Պատմամշակութային հուշարձանների պաշտպանություն.

- պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

✓ պետական մարմինների ծանուցում,

✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով ծրագրավորված աշխատանքների ուշացումները:

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 21.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Զեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխազագեղի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 50.0հազ.դրամ
		Արտանետումներ թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Ընկերության մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 120.0հազ.դրամ
		Խախտված տարածքների վերականգնում	313.62հազ.դրամ*
	Հողերի խախտում հետախուզական հորերի սահմաններում	Հողի շերտ նախնական հեռացում և պիպանում: Խախտված տարածքների վերականգնում	313.62հազ.դրամ*

	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում	«Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունը այս հողվածով ծախսեր չի իրականացնելու
		Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 90.0հազ.դրամ
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տրանսպորտի տեղաշարժ բացառապես գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով	Ծախսեր չի պահանջում
	Բուսածածկի խախտում հետախուզական հորեր սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	313.62հազ.դրամ*
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Բուսածածկի խախտում հետախուզական հորեր սահմաններում	Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 250.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 105.0հազ.դրամ
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում	313.62հազ.դրամ*
		Աղմուկի մակարդակի չափումներ	Տարեկան 80.0հազ.դրամ
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 150.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատի պ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 25.0հազ.դրամ
		Հորատի պ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

**8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՑԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատվել է մինչև 20235 թվականը հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Մշակված և հաստատված ռազմավարության հիմնական նպատակն է ոլորտի կարգավորման ու զարգացման, ընդերքի ռացիոնալ և համալիր օգտագործման, բնապահպանական և առողջապահական ռիսկերի կառավարման ու մեղմման, եկամուտների համաչափ/արդարացի բաշխման մեխանիզմների սահմանումը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը հիմնված է մի շարք ուղենիշային սկզբունքների վրա, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին

Ընդերքում առկա օգտակար հանածոները գրեթե ամբողջությամբ, բացառությամբ ջրի և գետային ավազաններում առկա ավազի, չվերականգնվող են: Հետևաբար կարևոր է, որ առկա պաշարների արդյունավետ օգտագործմանը և ստացվող օգուտների արդարացի բաշխմանը զուգընթաց իրականացվի նոր պաշարների հայտնաբերում: Զովեր-1 երևակման օգտակար հանառի պաշարների ուսումնասիրության նպատակով երկաթանական ուսումնասիրության աշխատանքները նախաձեռնել է «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունը, աշխատանքները իրականացվելու են ընկերության ֆինանսավորմամբ, ապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները և արդյունքում նախատեսվում է հետախուզել, գնահատել և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշտում հաշվառել նոր պաշարներ:

2. Հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ողջ հանրության բարեկեցությանը:

Ընդերքը շահագործում են ֆինանսապես և տեխնիկապես կարող ընկերությունները, սակայն ընդերքի շահագործումից ստացված օգուտները պետք է հասանելի լինեն ողջ հասարակությանը: Նույն տրամաբանությամբ՝ օգտակար հանածոների արդյունահանման գործընթացը չպետք է բեռ դառնա ազդակիր համայնքների համար: «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունը ծրագրավորվող աշխատանքների ընթացքում նախատեսում է ֆինանսական աջակցություն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին: Հանքարդյունահանման ընթացքում ստեղծվելիք, արդիական սարքավորումների շահագործման, հանքի

սպասարկման և մատակարարման հետ կապված նոր աշխատատեղերը կնպաստեն գործազրկության կրճատմանը, արտագաղթի կանխմանը:

3. Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև զուտ դրական ազդեցություններ ձևավորելը:

Ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերությունը մշակել և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն է ներկայացնում է բնապահպանական կառավարման համապարփակ պլան, որտեղ դիտարկվում են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելման և չեզոքացման համալիր միջոցառումներ:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք փաստել, որ ««Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերության կողմից Զովեր-1 ԱԿԽ երևակման տարածքում ծրագրավորվող ընդերքօգտագործման աշխատանքները իրենց բնույթով համապատասխանում են ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ուղենիշային սկզբունքներին:

9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

Զովեր-1 ԱԿԻՆ Երևական տարածքում իրականացվում է շրջակա միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշման պահանջներին համապատասխան: Ստորև, աղյուսակ 22-ում ներկայացված են ազդեցության վերահսկման նպատակով կատարվելիք բնապահպանական մոնիթորինգի հիմնական ցուցանիշները:


Աղյուսակ 22.

Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մոնիթորինգի տեսակը, պարբերականությունը
1	2	3	4
Անօրգանական փոշի, ծխազագեր	Երևական տարածք, ճանապարհ	Հետախուզահորերի անցում, հետ լցում	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ռեսուրսներ	Երևական տարածք	Աղտոտում նավթամթերքներով	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսական մեկ անգամ
Ադմուկ և թրթռումներ	Երևական տարածք	Տեխնիկայի տեղաշարժ, հորերի անցման աշխատանքներ	Զափիչ սարքերի կիրառում, տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ (հատկապես սուլթանական հավ, տափաստանային ծիծեռնակտցար հեսակները)	Տեղամասի տարածք և հարակից շրջան	Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ի արդյունքում տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում տարեկան մեկ անգամ

Նկար 33-ում ներկայացված են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող ազդեցությունների մոնիթորինգի դիտակետերի տեղադիրքը:

Մշտադիտարկումների իրականացման համար կհատկացվի 435.0հազ.դրամ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



Նկար 33.

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար երևակման տարածքում նախատեսվում են շարժական կապի միջոցներ, առաջին բուժօգնության միջոցներ, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 5°:

Զովեր-1 երևակման տարածքը հարում է Արաքս գետի ձախափնյա ողողահունի 803-805մ բացարձակ բարձրություններին:

Երևակման շրջանում արտաձին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով: Մոտակա հայտնի սողանքային մարմինները քարտեզագրվել են երևակման տարածքից ավելի քան 7.4-8.4կմ հեռավորության վրա՝ Մուրենավան համայնքից հյուսիս:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Մեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Երևակման

տարածքում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ): Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «Մագնոլիա Կոմֆորտ 2» ՓԲ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- Էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու լվացարանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Флора и растительность рек и озер Армении и их народнохозяйственное значение”. А.М. Барсегян
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
13. ՀՀ վիճակագրական վարչության հրապարակումներ (<https://www.armstat.am/am/>)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ


ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 24 հուլիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**
«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ 2» ՓԲԸ
- 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**
Մարզ Արարատ, համայնք Արարատ գյուղ Արարատ հողամաս
- 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
Անշարժ գույքի ներդրման 24/07/2023թ. թիվ 13849 պայմանագիր
- 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**
Կադաստրային ծածկագիրը՝ 03-015-0469-0063
Մակերեսի չափը (հա)՝ 12.59021
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ N 24072023-03-0089, գաղտնաբառ՝ MS5JAJQSCC4H

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության իրավունքի ժամկետը՝ 25 տարի:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՍՈՒՍԱՆ
ՄԱՐԿՈՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 24072023-03-0089, գաղտնաբառ՝ MS5JAJQSCC4H

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



Կադաստրի
կոմիտե



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 24 հուլիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՐՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԱԳՆՈՒԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ 2» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Արարատ գյուղ Արարատ հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի ներդրման պայմանագիր 24.07.2023թ. թիվ 13848

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-015-0469-0064

Մակերեսի չափը (հա)՝ 19.69

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արտավազ

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 24072023-03-0086, գաղտնաբառ՝ BGIEDZ9BGAYK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության իրավունքի ժամկետը՝ 25 տարի:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 24072023-03-0086, գաղտնաբառ՝ BGIEDZ9BGAVK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

